ՌՈՍՏԱՄ ԷՅԴԻՓՈՒՐ
ROSTAM EYDIPOOR

ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Վերջին տարիներում ԱՄՆ համաշխարհային տեղն ու դիրքը յուրջ փոփոխությունների ենթարկվեց: Խորհրդային Միության փլուզումը և Ռուսաստանի համաշխարհային դերի նվազումը ռազմավարական վակում առաջացրեց ԱՄՆ-ի համար, քանի որ Խորհրդային Միությունը 1940 թվականներից ի վեր համարվում էր ԱՄՆ-ի գլխավոր մրցակիցը Միջին Արևելքում: Հենվելով իր հզորացված ուժին և միջազգային ճամբարների նոր հավասարակշռությանը Ամերիկան իր առջև նպատակ դրեց լրացնել այդ բացը և ամրապնդել ու ընդլայնել իր տեղն ու դերակատարությունը տարածաշրջանում: ԱՄՆ-ի ազդեցության ու ներգործության մեծացումը Միջին Արևելքում ենթադրում էր կրճատել ու վերացնել յուրաքանչյուր խոչընդոտ և խանգարող մարտահրավեր, քանի որ Միջին Արևելքի անվտանգությունը այդուհետ համարվում էր Միացյալ Նահանգների անվտանգության շարունակությունը: Առավելագույն անվտանգությունը նվազագույն ռեսուրսներով ապահովելու համար տարածաշրջանը պետք է իր արժեքային ու կառուցվածքային համակարգով համընկներ ու համապատասխաներ Միացյալ Նահանգների համակարգին, այդ իսկ պատճառով Միացյալ Նահանգներն իր անվտանգության շրջանակի մեջ ներառեց Միջին Արևելքը:

Ժողովրդավարացման գործընթացը ներառում է չորս ընդհանուր բաղադրիչ.

1.Քաղաքական կառուցվածքի ժողովրդավարացման ուղղությամբ ընտրությունների բարենպաստ պայմանների ստեղծում:

2.Տնտեսական կառուցվածքի փոփոխություն կապիտալիստական և շուկայական փոխհարաբերությունների ու արժեքների ձևավորում:

3. Կրթության տարածման և հանրակրթության համակարգի միջոցով սոցիալական կառույցների վերափոխում:

4.Մշակութային փոփոխությունների խթանում՝ լիբերալական արժեքների, հատկապես, կնոջ և տղամարդու իրավահավասարության զաղափարների առանցքի շուրջ:

Նկատի առնելով Արևմուտքի միջինարևելյան քաղաքականության անցած ուղին և նախորդ փորձերը, թվում է, թե Միջին Արևելքում շատ քիչ

մարդիկ են լավատես այս նախագծի ապագայի նկատմամբ, և ընդհակառակը, միջինարևելյան իշխանություններն ու էլիտան մտահոգ են, որ դրսից պարտադրված այս նախագիծը անկայունություն կհրահրի տարածաշրջանում: Այս մտավախության պատճառով արաբական շատ երկրներ սնամիջապես բացասական արձագանքեցին նախագծին: Արաբական երկրները, ինպես օրինակ Սաուդյան Արաբիան գործնականում բացասական դիրքորոշում որդեգրեցին, չնայած հետագայում մեղմելով իրենց դիրքորոշումը պատրաստակամություն հայտնեցին բանակցել նախգծի շուրջ և Արաբական Լիգայի նեկայացուցչին ուղարկել Մեծ ութնյակի գագաթնաժողով:

Կա նաև մեկ այլ խնդիր, թե արդյոք ԱՄՆ-ն և Եվրոպան կարող են Միջին Արևելքում հանդես գալ միասնական ու համանման մոտեցումներով: Իրաքի ճգնաժամում արևմտյան աշխարհի երկու կենտրոնները ԱՄՆ-ն և Եվրոպան այնքան էլ միատարր հանդես չեն գալիս և հաճախ նրանց տեսակետները չեն համընկնում միմյանց: ԱՄՆ-ն և Եվրոպան միջազգային և միջինարևելյան մի շարք հարցերում ունեն տարբեր մոտեցումներ:

ԱՄՆ միջազգային ուսումնասիրությունների և ռազմավարական հետազոտությունների միջինարևելյան ծրագրի տնօրեն Ջոն Ալտերմանը նշում է, որ Մեծ Մերձավոր Արևելք ծրագրի իրականացման համար ԱՄՆ-ն պիտի կարողանա դիմագրավել երկու գլխավոր մարտահրավերներ, դրանք են.

-Մեծ Մերձավոր Արևելք նախագիծը նոր և անծանոթ նախագիծ է, որը չի գործադրվել ոչ մեկ այլ վայրում, ինչը մտավախություն ու զգուշավորություն է առաջացնում մասնակիցների շրջանում:

- Պետք է մշակվեն միջինարևելյան երկների և ԱՄՆ քաղաքականության ներդաշնակեցման մեխանիզմներ և պատրաստվեն խաղաղության հաստատման նպաստավոր նախադրյալներ: Ըստ Ալտերմանի, եթե Միացյալ Նահանգները չկարողանա հաղթահարել այս երկու դժվարությունները և շահել Միջին Արևելքի բոլոր երկրների հովանավորությունը, ապա նախագիծը դատապարտված է պարտության:

Միջին Արևելքում առկա հիմնական դժվարություններից մեկը այդ տարածաշրջանի ժողովուրդների անվստահությունն է Միացյալ Նահանգների վարած քաղաքականության և Իսրայելի օգտին կողմնապահ մոտեցումների նկատմամբ:

Միջին Արևելքում անվտանգությունը երաշխավորելու համար Միացյալ Նահանգներն ունի երեք գլխավոր խնդիրներ.

-Հակամերիկյան տրամադրությունների սրումը տարածաշրջանում և ժողովուրդների կրոնական հավատալիքների, «ջիհադի» ու նահատակության ոգու զարթոնքը:

-Իսրայելի վարչակարգի կողմից ճնշման կոշտ քաղաքականությունը և ահաբեկման մթնոլորտի տարածումը Պաղեստինի ժողովրդի հանդեպ:

-Տարածաշրջանի բնակչության սոցիալ-տնտեսական ծանր պայմանները և աղքատության ու գործազրկության բարձր ցուցանիշները:

Դրանց պետք է գումարել նաև Իրաքի և Աֆղանստանի իրավիճակը, նաև միջինարևելյան վարչակարգերի անկարողությունն ու անընդունակությունը սեփական ժողովուրդների պահանջները բավարարելու ուղղությամբ: Այս բոլորի արդյունքում փխրուն ու խոցելի է դառնում տարածաշրջանի անվտանգությունը:

Նախագծի թերություններից մեկն էլ այն է, որ նրա իրականացման գործիքները տեղական չեն, նրա մեջ մասնակցություն ու դերակատարություն չունեն տարածաշրջանի ոչ իշխանությունները և ոչ ժողովուրդները:

Նախագծի հիմնական սկզբունքները տարածաշրջանի ժողովրդավարացումը և սեփական ճակատագրում ժողովրդական մասնակցության մեծացումը, չեն համապատասխանում Միջին Արևելքում ներկայումս ընթացող իրական գործընթացներին: Առաջանում է պարադոքս, քանի որ եթե միջինարևելյան ժողովուրդները պետք է ընտրությունների միջոցով գործի բերեն իրենց նախասիրած իշխանությունները, ապա շատ հավանական է, որ ընտրվեն հակամերիկյան ուժերը: Այսպիսով, նախագծի իրականացումը, թերևս, անքան էլ չարդարացնի Միացյալ Նահանգների ակնկալիքները:

Վերջին տարիներում ԱՄՆ-ն հասկացել է, որ ավտորիտար ու բոնապետական վարչակարգերն իրենց ներկա ձևով ու բնույթով չեն կարողանում ապահովել Միացյալ Նահանգների շահերը: Դրանք չափազանց մեծ ծախսեր են պահանջում և խիստ փխրուն կայունություն են բերում տարածաշրջանին:

Միացյալ Նահանգները տարածաշրջանի իշխանությունների հետ միասին պիտի ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ փոխելու տարածաշրջանի քաղաքական միջավայրը: Միացյալ Նահանգները ձգտում է պանարաբական ու պանիսլամական փուլերից հետո Միջին Արևելքում առաջացնել երրորդ ալիքը ուղղորդված ու կառավարելի ժողովրդավարության ալիքը: Ամերիկացիների կարծիքով, իսլամիստներն ու քաղաքական իսլամը ժողովրդավարության ամենաարմատական հակառակորդներն են տարածաշրջանում, որոնք օգտվում են առկա փակ միջավայրից և տարածում իրենց գաղափարները:

Միացյալ Նահանգները վտանգ է զգում այն բանից, որ տարածաշրջանում միակ քաղաքական ալտերնատիվը հանդիսանում են իսլամական ուժերը: Արաբական աշխարհում քաղաքական գործունեության միակ

կայացած կառույցը մզկիթներն են. Մզկիթից են սկիզբ առնում արաբական աշխարհի թե՛ արմատական ու հեղափոխական հոսանքները և թե՛ պայքարող ու ազատագրական հոսանքները:

Ամերիկացիների տեսակետից, մզկիթը որպես սպառնալիք է դիտարկվում: Եթե անցյալում այդ սպառնալիքը վերագրվում էր միայն շիա հոսանքին և հիզբուլլահ շարժումներին պատկանող մզկիթներին, ապա սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո ավանդական և «վահաբական» մզկիթները ևս նույն չափ սպառնալից համարվեցին:

Միացյալ Նահանգները և Արևմուտքը տարիներ շարունակ պաշտպանել ու հովանավորել են տարածաշրջանի փակ և ավտորիտար վարչակարգերին, բայց այժմ հասել են այն եզրակացության, որ փակ համակարգից ամենից շատ օգուտ են քաղում իսլամական ուժերը, հատկապես, սեպտեմբերի 11-ից հետո, երբ միջինարևելյան վարչակարգերը ահաբեկչության դեմ պայքարի անվան տակ ավելի ամրացրին իրենց իշխանությունը և բռնություններ ու հալածանքներ սկսեցին քաղաքական հակառակորդների դեմ: Այս վարչակարգերը ոչ մի հնարավորություն ու շանս չէին թողնում ոչ-կրոնական շարժումների ու լիբերալ հոսանքների համար: Այս գործընթացների ընդհանուր հետևությունն այն էր, որ պետք է ձևավորել ոչ-կրոնական և լիբերալական այլընտրանք, որպեսզի իսլամիստները չլինեն քաղաքական միակ այլընտրանքը:

Միացյալ Նահանգները փորձում է իր Մեծ Մերձավոր Արևելք նախագծով ձերբազատվել մի խոշոր հակասությունից: Իսլամիստներին կանխարգելելու համար ԱՄՆ պարտավոր էր հովանավորել Միջին Արևելքի բռնապետ վարչակարգերին մի կողմ դնելով իր ժողովրդավարական սկզբունքները: Բայց մյուս կողմից, ամերիկացիները տեսնում էին, որ Միացյալ Նահանգների համագործակցությունը ավտորիտար իշխանությունների հետ և քաղաքական ազատ մթնոլորտի բացակայությունը նպաստում են իսլամիստների հզորացմանն ու հեղինակության բարձրացմանը:

Եթե Միացյալ Նահանգներն անցյալում ձգտում էր պահպանել տարածաշրջանի կայունությունը, այժմ փորձում է լայն փոփոխություններ առաջացնել տարածաշրջանում, մինչդեռ Եվրոպան, որն անցյալում միշտ քննադատում էր Միացյալ Նահանգներին մարդու իրավունքների հարցում անհետևողական լինելու համար, այժմ ինքն է դարձել ավելի վերապահ ու զգուշավոր: Միացյալ Նահանգներն ու Եվրոպան համակարծիք են միայն մեկ հարցում՝ ահաբեկչության և ավտորիտար ռեժիմների միջև առկա փոխկապակցվածության հարցում: Եվրոպան ավելի շատ հակված է այլ տեսակի լուծումների, ինչպես օրինակ Հելսինկյան համաձայնագրի (1975)

պես նոր հակակարգերի ընդունման, որը ժամանակի կարողությամբ շատ արդյունավետ լինել Արևմուտք Արևելք փոխհարաբերություններում:

Ակնհայտ է, որ սույն ծրագիրը չի հնթադրում փոխել Ամերիկայի բարեկամ երկրների վարչակարգերը, որոնք երկար տարիներ համագործակցել են Ամերիկայի հետ և քաղաքական, անվտանգության ու տնտեսական սերտ կապեր ծավալել: Գուցե Միացյալ Նահանգները շատ բան չկորցնի Սիրիայի և Լիբիայի վարչակարգերի տապալմամբ, սակայն նույնը չի կարելի ասել Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի և Հորդանանի մասին:

Մյուս կողմից, ընտրությունների անցկացումը և իրական ժողովրդավարությունը կարող են անկախատեսելի ու անցանկալի հետևանքներ ունենալ: Միացյալ Նահանգները գիտի, որ իսլամիստները կարող են արդյունավետ կերպով օգտվել ժողովրդավարական գործիքներից ու հնարավորություններից, որպեսզի հաստատեն կրոնապետություն: Այսպիսով, երկու տարբերակներն էլ, այսինքն թե ներկայիս խոցելի կայունության պահպանումը և թե ժողովրդավարության հաստատումը կարող են վտանգավոր ու անկախատեսելի լինել: Այստեղ առաջ է քաշվում երրորդ վարկածը տարածաշրջանի աստիճանական ժողովրդավարացումը նույն երկրների վարչակարգերի օգնությամբ (Այս վարկածի մեջ ներառվում են նախորդ երկուսի որոշակի տարրերն ու բաղադրիչները): Երրորդ վարկածը կարող է ապահովել և ամերիկյան շահերը, և տարածաշրջանային վարչակարգերի ակնկալիքները միաժամանակ բավարարելով Եվրոպայի պահանջները:

Ինչպես ասվեց, այս նախագիծը ներառում է միայն ԱՄՆ դաշնակից իշխանություններին, իսկ ԱՄՆ-ին հակառակող և խնդիրներ հարուցող երկրները հավանաբար ուրիշ նախագծերում կներառվեն: Միացյալ Նահանգները ցանկանում է Եվրոպայի աջակցությամբ արաբ ղեկավարներին համոզել՝ որոշ բարեփոխումների գնալ և ձևավորել քաղաքական բաց միջավայր:

Այս իրավիճակում Մերձավոր Արևելքի իշխանություններին ուրիշ բան չի մնում, քան ակամա հանդուրժել այս նախագիծը և ենթարկվել նրա զոնե մի քանի դրույթներին: Ըստ որոշ վերլուծաբանների, արաբական երկրները մտադիր են կիրառել Իսրայելի մարտավարությունը, ով առերես ընդունեց ճանապարհային քարտեզի նախագիծը, սակայն գործնականում այն ներքաշեց անվերջ ձգձգվող գործընթացների մեջ և դանդաղորեն մտցրեց նոր փոփոխություններ, Ամերիկային մոլորեցրեց տարբեր մանրամասություններով ու կողմնակի խնդիրներով:

Ինչ որ է, Մեծ Մերձավոր Արևելք նախագիծը ինչպիսի սահմանում ու մեկնաբանություն էլ ստանա, լի է տարբեր հակասություններով ու տար-

ըմբռնումներով: Եթե տարածաշրջանի ներկա վարչակարգերը թուլանան չկա երաշխիք, որ ամեն ինչ ընթանա ըստ ամերիկացիների նախընտրած սցենարի: Իրաքի փորձը ցույց տվեց այդ գործընթացի բարդությունը: Քաղաքական շարժումները համակարգելու և ուղղորդելու համար իսլամիստներն ունեն իրենց կրոնական կառույցներն ու կենտրոնները, սակայն մյուս խմբերի ու հոսանքների համար չկան կազմակերպչական նպաստավոր ու հավասար պայմաններ, իսկ վարչակարգերը չեն ցանկանում ռիսկի գնալ և բացել քաղաքական մթնոլորտը:

Պետք է ավելացնել նաև, որ Մեծ Մերձավոր Արևելք ծրագիրը մշակվել էր ի պատասխան մի շարք հրատապ հրամայականների, մինչդեռ դրա իրականացումը

Մեծ Մերձավոր Արևելք նախգիծը ավելի շատ նման է մի իդեայի, որը պետք է իր գործադրման ճանապարհին աստիճանաբար ձևավորվի ու վերածվի մոդելի կամ նախագծի: Այլ կերպ ասած, Մեծ Մերձավոր Արևելք նախագիծը ընդամենը ճանապարհային քարտեզ է , որը ուրվագծում է ընդհանուր ուղին և կողմնորոշումը, իսկ ճանապարհի այլ մանրամասնությունները և առանձնահատկությունները պետք է որոշվեն ընթացքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Քիսինջեր Հ., Ամերիկյան դիվանագիտությունը 21- րդ դարում, Միջազգային հետազոտությունների և ուսումնասիրությունների մշակութային հաստ., Թեհրան, 2003թ.:
2. Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի անցյալը և բաղադրիչները, Չեշմանդազ ամսագիր, 14- րդ համար, Թեհրան, 2005թ.:
3. Ամերիկյան ժողովուրդավարությունը Մեծ Մերձավոր Արևելքում, Հեդայաթ հետազոտության հանդես, 39- րդ համար, Թեհրան, 2005թ.:
4. Դեհշիրի Մ., Հողվածների ժողովածու Միջին Արևելքի խնդիրների մարտահրավերների մասին, Նորագույն ոեգոնալ մոտեցումը Միջին Արևելքում, Թեհրան, 2005թ.:
5. Ղասեմի Հ., Միացյալ Նահանգների հարձակման ազդեցությունը Միջին Արևելքում, Պաշտպանության և անվտանգության հանդես, 28-րդ համար, Թեհրան, 2002թ.:
6. Մոշիրզադեհ Հ., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության շրջադարձը և Իրաքյան հարձակումը, Քաղաքագիտական և իրավաբանական հանդես, Թեհրանի համալս., 2008թ.:
7. Մեծ Մերձավոր Արևելքը և Իրանի անվտանգությունը, Բազթաբ ամսագիր, 34-րդ համար, Թեհրան, 2005թ.:

THE GREAT MIDDLE EAST. OBSTRACLES AND CHALENGES

In this paper we discus about foreign policy of U.S.A in last deceits and new strategy for democratization the region, its problems and difficulties. After 11 September attack US policymakers found the main problem is democracy deficit in Middle East. so Bush administrations recommended The Greater Middle East doctrine, but democratization brings Islamist grow up and new unwilling processes for the United States.